

## ՏԱՐՅԱՆՏԵՍ ԼՈՒԵՎԻ ԵՎ ԴՈՅՐՈՒԹՅԱՆ

*Н. М. Искандарян*

Великий армянский писатель У. Сароян навсегда останется в сердце армянского народа, как человек, несущий людям добро и любовь. В его произведениях везде можно наткнуться на мысль о всепоглощающей любви людей разных национальностей друг к другу, о братстве и доброте к маленьким и немощным мира сего. Его самый любимый киноперсонаж - трогательный бродяга Чарли Чаплин. Он был близок ему по духу и сопереживаниям... «Любовь бессмертна, ненависть умирает каждую секунду». Это слова матери Гомера Маколи из романа «Человеческая комедия», но это и есть жизненный принцип У. Сарояна.

## SAROYAN'S NOTIONS OF LOVE AND KINDNESS

*N. M. Iskandaryan*

The great Armenian writer W. Saroyan will always stay in the hearts of Armenians, as one who spreads love and kindness to people. In his works one comes across with the thought of all-consuming love of people from different nations to each other, fellowship and kindness to small and feeble world. His most beloved actor is touching tramp Charlie Chaplin. He was close to his soul and heart. "Love is permanent, envy always dies", these are the words of Homer Macol's mother from the novel "Human Comedy": this is the life principle of Saroyan.

## ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԵՆՍԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԻՍԱՅԱԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

**Ծ. Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ**

*Քանադական գիտությունների թեկնածու*

Հայ գրականության, մասնավորապես Ավետիք Իսահակյանի գրական ժառանգության մեջ Արևելքն ու Արևմուտքը, չնայած իրենց ունեցած կրոնափիլիսոփայական և մշակութային էական տարբերություններին, մշտապես եղել են գրական դաշտի հետաքրքրությունների կիզակետում: Իսահակյանի ստեղծագործությունն այդ հետաքրքրությունների մի յուրօրինակ համադրություն է, որի մասին վկայում է նաև բանաստեղծը՝ դեռևս 1895 թ. գրելով. «Ես պիտի օգտվեմ գլխավորապես հին Ասիայի կրոններից, էպոսներից ու պոեզիայից և նոր աշխարհի՝ Եվրոպայի միայն գիտություններից»<sup>1</sup>: Իսկ 1908 թ. հունիսի 20-ին Ղազարապատից Հովհ. Թումանյանին գրած մի նամակում նշել է. «...Ես ապրում եմ հիմա բացառապես անցյալով (ոչ թե իմ անմիտ անցյալով), այլ հին ազգերի... Շա՛տ

<sup>1</sup> *Ավետիք Իսահակյան*, Հիշատակարան (կազմող՝ Արամ Ինճիկյան), Երևան, 1977, էջ 172: Այսուհետև մեջբերումները «Հիշատակարան» գրքից կնշվեն փակագծերի մեջ՝ Հ տառով և համապատասխան էջը՝ արաբական թվանշանով:

եմ խորասուզվել Ձորոաստրի և Բուդդայի վարդապետության և կյանքի մեջ»<sup>2</sup>:

Բանաստեղծի նամակներում և «Հիշատակարանի» էջերում հաճախ կարելի է հանդիպել Արևելքի կրոնափիլիսոփայական ուսմունքների և մարգարեների մասին հիացական տողերի, դրանց ուրույն մեկնաբանությունների, սակայն առավել որոշակի և գեղարվեստական գունավորմամբ դրանք տեսանելի են գրողի գրական ժառանգության մեջ, առավելապես՝ արձակ լեզենդներում և զրույցներում:

Անդրադառնալով երիտասարդ Իսահակյանի խոհական աշխարհի ձևավորմանը՝ գրականագետ Ավ. Իսահակյանն առանձնացնում է համաշխարհային փիլիսոփայական մտքի երեք անուններ, որոնց ազդեցությունը չափազանց մեծ է եղել այդ հարցում՝ Բուդդա, Շոպենհաուեր և Նիցշե: Այդ ազդեցության մասին վկայում է նաև բանաստեղծը՝ 1938թ. խոստովանելով. «Երիտասարդությանս տարիներին տարբեր փիլիսոփայական սիստեմներով շատ եմ տարվել... Հափշտակվել եմ Բուդդայով, Շոպենհաուերով, մանավանդ Նիցշեով...»<sup>3</sup>:

Դառնալով Ֆ. Նիցշեի վարդապետության ազդեցության ուսումնասիրությանը և նկատելով, որ Բուդդայի ուսմունքը մշտապես եղել է Շոպենհաուերի հետաքրքրությունների տիրույթում, իսկ վերջինս էլ, իր հերթին, պաշտամունքի առարկա է եղել Նիցշեի համար, գրականագետ Ավ. Իսահակյանը նշում է. «Իսահակյանի հափշտակվելը Բուդդայով, Շոպենհաուերով և Նիցշեով խոսում է այն մասին, որ բանաստեղծի փիլիսոփայական հակումները... «հոգևոր միասնության» նույն զծի վրա են գտնվում»<sup>4</sup>: Այսինքն՝ անգամ Նիցշեի ուսմունքի հանդեպ երիտասարդ Իսահակյանի հետաքրքրության շառավիղները հասնում են մինչև Բուդդայի վարդապետություն:

Ի՞նչը կարող էր գրավել Իսահակյանին Արևելքում: Առաջին հերթին, թերևս, աշխարհաճանաչողության հարցում ամեն ինչ ես-ի վերափոխումից, ինքնարարումից սկսելը, ենթագիտակցությանն ու ինտուիցիային ապավինելը, աշխարհի զարգացումը ոչ այնքան ռացիոնալ, որքան բարոյական օրինաչափություններով պայմանավորելը: Արևելքն ուսումնասիրություններում սկզբունքորեն բնութագրվել է նաև այն մեծ հավատով, որ ունեցել է մարդ անհատի ներքին ուժի նկատմամբ և այն պատրաստակամությամբ, որով կարող էր ներդրումներ անել հանուն այդ մեծ ներուժի, մի բան, որին անվերապահորեն հավատ էր ընծայում նաև Իսահակյանը: Ի վերջո, հարցի պատասխանն առավել պարզորոշ տալիս է հենց բանաստեղծը, որ տակավին 1895 թ. «Հիշատակարանում» գրում է. «Չմտածող մարդու համար ամեն բան պարզ է. նրա մտքովը չի անցնում «ինչո՞ւ» հարցը... Բայց մեկը, ով մի անգամ դնում է «ի՞նչ», «ինչո՞ւ» հարցերը, նրա երջանկությունը մարում է, և աշխարհը սկսում գաղտնիքների մեջ... Մտածող մարդու համար երջանկությունը ճշմարտության գտնելն է... Մի անգամ ճամփա մտ-

<sup>2</sup> **Ավետիք Իսահակյան**, Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 6-րդ, Երևան, 1979, էջ 89-90: Մեջբերումներն Իսահակյանի ստեղծագործություններից բերվում են՝ Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, Երևան, 1973-79 հրատարակությունից: Այսուհետ փակագծում հռոմեական թվանշանով կնշվի հատորը, արաբականով՝ էջը:

<sup>3</sup> **Արամ Ինճիկյան**, Ավետիք Իսահակյան, Երևան, 1977, էջ 228:

<sup>4</sup> **Ավիկ Իսահակյան**, Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն, Երևան, 2000, էջ 252:

նողը պիտի շարունակե հասնել նրա վերջին՝ Նիրվանային...» (Յ., 173):

Կարևորելով բարոյականությունը և առաքինությունը հասկացությունները՝ Իսահակյանն իր կենսափիլիսոփայությունը կառուցում է կրոնական-գաղափարախոսական-փիլիսոփայական այնպիսի ուսմունքների հանգանակով, որոնց մարգարեները, ըստ էության, բարոյականություն ու առաքինություն քարոզողներ են, ինչպես Բուդդան («Բուդդիան թռչուն», «Բուդդիա»): Ընտրությունն ամենևին պատահական չէ, այլ պայմանավորված-պատճառաբանված է Բուդդայի ուսմունքի և սեփական կենսափիլիսոփայության մի շարք ընդհանրություններով:

Իսահակյանի համար կարևորը մարդկային բարձրագույն արժեքներն ու առաքինություններն են, այսինքն՝ այն ամենը, ինչը մարդուց Մարդ որակական վերափոխումն է ապահովում՝ ստիպելով վերջինիս անցնել արժեքների վերագնահատման ուղիով: Այստեղ կարևոր չէ հնդկական կամ չինական աստվածության խնդիրը: Պատահական չէ, որ հին աշխարհի գրեթե ոչ մի օջախում չի նշվել, թե խոսքը որոշակիորեն վերաբերում է հնդկական կամ չինական աստվածությանը, այլ մշտապես բոլոր տեսությունները կառուցել են՝ մարդ արարածն ընդունելով որպես անկյունաքար: Ավելին, հին հնդկական աստվածներից շատերն անգամ անձնավորված էլ չեն եղել, և այդ է պատճառը, որ Նիրվանային ձգտողը, մոտեցողը կարող էր իր մեջ արթնացնել իր բուդդային:

Իսահակյանի համար կարևորագույնը մարդկային կամքի այսօրինակ դրսևորումն է և մարդու մեջ եղած կենդանական նախասկզբի հանդեպ մարդկային բանականության ու կամքի հաղթանակը: Գրողը որոնում է այնպիսի ուղիներ, որոնցով կարելի է հասնել մարդ անհատի հոգևոր հասունացմանը և կատարելությանը: Ըստ Իսահակյանի՝ այդ որակին կարելի է հասնել ինքնակերտման, ինքնարարման ճանապարհով: Այդ պարագայում Բուդդան ոչ թե մարդու սոսկ ինքնակատարելագործման նախատիպ է գրողի համար, այլ առաջին հերթին վերոհիշյալ հոգևոր որակին հասնելու միջոց, ճանապարհ, ճիշտ այնպիսին, ինչպիսին, ասենք, Գերմարդը (Նիցշե, «Այսպես խոսեց Ջրադաշտը»):

Դեռևս 1895թ.-ին «Յիշատակարանում» մեջբերելով գերմանացի մտածող Պ. Շայֆլինի հայտնի խոսքերը («Ոչ ամեն մարդ կա գազանի մեջ, բայց ամեն գազան կա մարդու մեջ»)՝ բանաստեղծը հավելում է. «Գիտական արժեք վայելող խոսք» (Յ., 168): Ըստ Իսահակյանի՝ մարդու մեջ եղած գազանի հաղթահարումից է սկիզբ առնում Մարդեղացումը, և ծնվում է հերոսը կամ մեծատառով Մարդը:

Շարադրելով հերոսի, գերմարդու սեփական տեսությունը՝ Իսահակյանը «Յիշատակարանում» արձանագրել է. «Մենք ապրում ենք կյանքի համար, և այդ կյանքը պիտի հերոսային լինի. իսկ հերոսը պիտի բարոյական լինի, բարձր ու գեղեցիկ: Նրա կշիռը պիտի ճշմարտությունը լինի, այն ամենը, ինչ որ ճշմարտության, բարոյականության դեմ է գնում, նա պիտի փշրե՝ իր երջանկությունը, բախտը, պաշտած կուռքերը, եթե դրանք հակասում են ճշմարտությանն ու բարոյականությանը» (Յ., 138):

Իսահակյանի գերմարդը, հերոսը կամ Մարդն ունի վեհ ու վսեմ նպատակներ, ծրագրեր, օժտված է մարդասիրությամբ, այլասիրությամբ: Նրա մեծության չափանիշը սերը, սիրելու կարողությունն է. սիրել թույլին, անպաշտպանին, խեղճին, թշվառին, առհասարակ մարդուն. «Սիրել բոլորին, սիրել անչափ, լի կարեկ-

ցանքով, սիրել մինչև անձնագոհությունը. սա մի այնպիսի էզոիզմ է, որ միայն հերոսները կանեն»(Յ., 161): Եվ սիրել հերոսի՝ պես, հերոսի՝ չափ... Ահա՛ այս և այսպիսին է հերոսի իսահակյանական պատկերացումը: Եվ ակներև է, որ Բուդդայի հանդեպ հետաքրքրությունն իր սեփական պատկերացումների և բուդդայականության միջև եղած անմիջական առնչակցության հետևանք է:

Բուդդան (Սիթհարթա Գաութամա մ.թ.ա. 624-544), ըստ ավանդության, եղել է հնդիկ արքայազն՝ Սաքիա (Շաքիա) Մունի անունով: Ծնվել է արիական Գաութամա տոհմում: Նրա հայրը ամեն ինչ արել է, որ իր որդին երբեք չիմանա, թե ինչ է տառապանքը և չտեսնի կյանքի դժվարությունները: Բայց մի օր Սաքիա Մունին փախչում է հայրական տնից՝ ճշմարտություն որոնելու:

1908թ. գրած «Բուդդիա» լեզենդում Իսահակյանը պատկերում է, թե ինչպես է Բուդդա դարձած Սաքիա Մունին փորձում ժողովրդի առջև բացել ճանապարհները դեպի Նիրվանա: Սակայն ժողովուրդը կարծում է, թե արքայորդին ցնորվել է, և ծաղրում է նրան: Ձորեղ է տգիտությունը, մեկն է այն «տասը շղթաներից», որոնք պետք է թոթափի մարդը՝ առաջնորդվելով «ուստետեյան ճշմարտություններով»: Մարդկանց չարությունը հարուցում է Բուդդայի ցասումը: Նա նկատում է, որ մարդիկ իրենց ցանկությունների ու կրքերի գերին են ու սեփական տգիտության զոհը, մինչդեռ բուդդայականությունը, ուղղված լինելով բրահմանականության դեմ, նշել է, որ մարդիկ իրարից տարբերվում են միայն բարոյական գիտակցությամբ և բարձրագույն ճշմարտության ըմբռնմամբ, այլ ոչ թե սոցիալական կարգավիճակով և, մերժելով բոլոր գոհաբերությունները, ընդունելի է համարել միայն մեկը, այն է՝ սեփական հաճույքների, կրքերի և ցանկությունների գոհաբերումը<sup>5</sup>:

Ինչ խոսք, այստեղից էլ սկիզբ են առնում կենդանական նախասկզբի դեմ մարդու պայքարն ու մարդկային անսահման տառապանքը:

Բուդդան տեսնում է, որ ամեն կենդանի արարած ինքնին չարագործ է, որ բոլորը հոշոտում են իրար: Նա հիշատակում է «Կարմայի ահեղ օրենքը»<sup>6</sup>, վկայակոչում է նաև Մանու վարդապետին<sup>7</sup>: Պնդելով, որ չարիքին հետևում է պատիժն այնպես, ինչպես «սայլի անիվը՝ լծված գրաստին», Բուդդան պատիժ է խնդրում Ազնիից ու Ինդրայից՝ մարդուն անվանելով «վավշագարշանքի ցեխե անոթ»(III, 140):

Անսկիզբ ու անմահ է տիեզերքի տերը. անսկիզբ ու անմահ է և նրա սերը ուրից գլուխ մեղսավոր մարդու հանդեպ, ու գերտիեզերական են թե՛ սերը, թե՛ ներողամտությունը. այս միտքն է կայծակի պես փայլում Բուդդայի գլխում ու խոցում քարացած գուրք: Եվ նա խորհում է. «...Ես, որ մարդկային հյուլեական խղճովս ողորմում եմ այս թռչնիկներին և, տեսնելով նրանց չարիքն ու եղեռնը, նե-

<sup>5</sup> Տե՛ս *Սեյրան Չաքարյան*, Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2005, էջ 23:

<sup>6</sup> Ըստ Կարմայի՝ մարդու հոգու վերամարմնավորումը և կեցության հետագա ձևը որոշվում է միայն իր բարի և չար գործերով: Հարկ է նշել, որ Կարմայի գաղափարը ժամանակին բավարար չափով լուծել է բարու և չարի հիմնահարցը՝ հավաստիացնելով, որ ամեն ինչ կախված է միմիայն մարդուց:

<sup>7</sup> Մանուն հնդկական հավատալիքներում մարդկային ցեղի տասնչորս նախահայրերի ընդհանուր անունն է, որոնցից առաջինին վերագրվում է «Մանուի օրենքները» (Մանավադիարմաշաստրա) նշանավոր որոշումների ժողովածուն: Նա սահմանել է նաև պատժի օրենքը:

րում են և խնամում, չէ՞ որ Անսկիզբն էլ իր մեծ գերտիեզերական սիրով և գթով խղճում է մարդկանց և արարածներին...»(III, 143):

Տարիներ անց մեկ այլ՝ «Բուդդիան թռչուն» (1925) պատումում Իսահակյանը փորձում է գտնել չարիքի արմատը, տանջանքի ու տառապանքի սկզբնապատճառը: Իր գոյության ընթացքում մարդը ձգտում է հասնել անհասանելիին, բացահայտել իրերի խորքն ու էությունը, որոնում է, ու նրա միտքը շարունակ տագնապի մեջ է: Բուդդան տեսնում է այդ ամենը և հետևյալ կերպ բնութագրում աշխարհն ու մարդուն. «Տեսա՝ աշխարհը՝ այնքան մեծ, և զգացող արարածը՝ այնքան փոքր, բայց նրա տենչանքն ու տանջանքը՝ աշխարհից մեծ» (III, 222):

Բուդդան մտորում է ու հանգում այսպիսի եզրակացության. տառապանք է կյանքը, իսկ «աշխարհը՝ դրուժան իր բոլոր խոստումների մեջ, բացի մի խոստումից, որ կատարում է անվրեպ ու անհապաղ՝ մահը»(III, 222):

Եիշտ նույնպիսի մի բնութագրում էլ կարդում ենք «Անանդա» անավարտ պատումում, որտեղ Անանդան կյանքը բնութագրում է որպես «հանցանք, չարիք, ոճիր ամեն քայլափոխում» ու խորհում է դառնորեն. «Ապրեցի և որքան տանջվեցի, տանջա՞նքն էր շատ, թե՞ հաճույքը. անշուշտ տանջանքը շատ էր»: Ակամա ծնվում է հարց. «...Բայց ինչու՞ ապրեցի, երբ դառն էր կյանքը»<sup>8</sup>: Անգամ այդ անվերջ թվացող տառապանքներից հետո էլ մարդու ամեն հյուլեն դեպի կյանք է վազում. «Մեր ամեն մի հյուլեն կյանք է աղաղակում և փախչում մահից: Բուդդան կյանքի սիրուց, մահից փախչելով ու վախենալով՝ Նիրվանան գտավ՝ փրկվելու համար...»<sup>9</sup>, -մտորում է Անանդայի ես-ը: Ըստ Իսահակյանի՝ որքան էլ կյանքը պատկերվի որպես տառապանք, այնուամենայնիվ տառապանքը խթանում է ապրելու տենչը, ազնվացնում է մարդուն, կրթում-կոփում է նրան և դարձնում «հոգու արիստոկրատ»:

«Բուդդիան թռչուն» պատումում Բուդդան, նախքան Սիթհարթայի կերպարանքով վերամարմնավորվելը, մարմին է առնում սովորական մի թռչունի կերպարանքով (ի դեպ, հոգու՝ թռչունի կերպարանքով վերամարմնավորման մասին գրույցներ հանդիպում են ոչ միայն հնդկական, այլ նաև հայկական հավատալիքներում<sup>10</sup>): Ըստ հնդկական կրոնական պատկերացումների՝ բոլոր կենդանի արարածները կեցության հավիտենական շրջապտույտում (սանսարա) ենթակա են գոյության ձևերի անընդհատ փոփոխության, ինչի շնորհիվ մարգարեն մշտապես հեռու չի եղել մարդկանցից, այլ հաճախ մնացել է երկրային աշխարհում՝ մարդկանց օգնելու առաքելությամբ:

Եվ ահա, թռչունի կերպարանքով Բուդդան զգում է այն ամենը, ինչ իր հյուլեական գոյության ընթացքում ստիպված է ճաշակել կենդանի արարածը. զգում է ցրտի ու քաղցի դառնությունը, բայց «անընկճելի քաղցը մտրակում է նրա ապրելու կամքը»: Նա ճեղքում է ծառի կեղևը և, տեսնելով միջատներ, քաղցից դրդված, մղվում է ուտելու: Բուդդան բացականչում է. «Կամենալ ապրել - ահա՛ չարիքի հավերժական արգանդը, որ բնավ չի ստերջանում» (III, 222):

<sup>8</sup> Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ավ. Իսահակյանի արխիվ, N 2-459:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Տես *Սանուկ Արեղյան*, Երկեր, է, Երևան, 1975, էջ 17:

Երկը բաղկացած է երկու մասից: Առաջինը խտացնում-ամփոփում է Բուդդայի խոհերն ու մտորումները, չարիքի աղբյուրը գտնելու տենչերը, իսկ երկրորդում վարդապետը սեփական օրինակով ցույց է տալիս տառապանքից ազատվելու ուղին հետևյալ տրամաբանությամբ. գոյություն ունենալ նշանակում է տառապել: Ուրեմն՝ եթե կյանքը տառապանք է (իսկ այս միտքը բուդդայականության փրկության վարդապետության հիմքում ընկած չորս «վեհագույն ճշմարտություններից» առաջինն է), ապա այդ տառապանքը ծնունդ է առնում ցանկություններից ու կրքերից (երկրորդ ճշմարտություն), ուստի տառապանքից ազատվելու միակ ուղին կրքերի և ցանկությունների հաղթահարումն է (երրորդ ճշմարտություն): Այսինքն՝ բարձրագույն նպատակին հասնելու միակ ուղին ինքնազոհաբերումն է՝ ցանկությունների, կրքերի ու զգացմունքների, բնազդների ու բնական մղումների սահմանափակմամբ: Այդպես է վարվում Բուդդան, որը, տեսնելով քաղցից տառապող մանկանը, հուզված բացականչում է. «Անհուն է ձեր տառապանքը, ո՛վ ապրողներ... Բայց թո՛ղ ապրի այս մանուկը... օ՛մ, օ՛մ, օ՛մ...» (III, 223), և թռչունը նետվում է կրակի մեջ՝ հագեցնելու մանկան քաղցը: Զոհվեց՝ փրկելու համար: Սա է բացարձակ երանության (Նիրվանա) հասնելու ուղին, որը ձգվում է միայն տառապանքների միջով, սեփական անձնասիրական բնազդներն ու մղումները զոհաբերելու գնով:

Հարկ է նշել, որ Իսահակյանը հեղինակային ծանոթությամբ բացատրում է «օմ» բառի իմաստը՝ այն դիտելով որպես «ամեն», «եղիցի» բառերի հոմանիշ: «Օմ» բառը հնդկական հավատալիքներում ունեցել է մոգական ուժ և միշտ գործածվել է աստվածներին ուղղված աղոթքներում, ինչպես նաև վտանգի պահերին: Այդ բառի մոգական ուժով անգամ հովիվները փորձել են հոտն ազատել գիշատիչների ճանկերից, և ընդհանրապես, վտանգի մեջ գտնվողն անպայման իր աղոթքի սկզբում հիշատակել է այն: «Օմ» բառին զուգահեռ գործածվել է նաև «աում» բառը. «Այս բառը ոչինչ չի նշանակում և ինքնուրույն ոչ մի իմաստ չի արտահայտում: Բայց միևնույն ժամանակ այն նշանակում է ամեն ինչ, իրականում ունի հրաշագործ ուժ... «Աում»-ը անցյալն է, ներկան և ապագան»<sup>11</sup>:

Պարտքը գիտակցելը, այդ սրբությանը հավատարիմ լինելը զոհեր է պահանջում, երբեմն ավելի շատ, քան կարող է թվալ առաջին հայացքից, բայց ամեն դեպքում առատ է զոհաբերողի վարձատրությունը: Այս գաղափարն է ընկած «Ուշինարա» (1923) լեգենդի հիմքում:

Հիշատակվում են Ուշինարայի մասին առասպելի մի քանի տարբերակներ, որոնցից մեկում երկու թռչունների վերափոխված Ինդրան և Ագնին որոշում են փորձել Ուշինարա արքային, որն արդարամիտ ու իմաստուն մարդու այնքան մեծ համբավ ուներ, որ գերազանցում էր անգամ Ինդրային<sup>12</sup>: Այսինքն՝ հասել էր գիտակցության այն մակարդակին, որ հնդկական տերմինաբանությամբ ընդունված է համարել «դիարմայի գիտակցում»: Առասպելի մյուս տարբերակներում Ուշինարային փորձությունների ենթարկում են հենց օրենքի աստված Դիարման (բազեի կերպարանքով) և Ինդրան (վերափոխված աղավնու), իսկ Ուշինարային վերագրվող փորձություններին ենթարկվում է ոչ թե Ուշինարան, այլ նրա որդին՝

<sup>11</sup> *Л. С. Васильев*, История религий Востока, Москва, 1988, стр. 196.

<sup>12</sup> *Э. Н. Темкин, В. Г. Эрман*, Мифы древней Индии, Москва, 1982, стр. 167-168.

Շիվի (ման՝ Շիբի) անունով<sup>13</sup>:

Իսահակյանը, հետևելով հնդկական առասպելին, լեգենդի առաջին տարբերակում<sup>14</sup> Ուշինարային ներկայացրել է որպես արքա, իսկ հետագայում՝ մի քանի փոփոխություններ կատարելուց հետո՝ որպես դատավոր: Ինդրան ու Ազնին որոշում են փորձել դատավորի առաքինությունն ու անաչառությունը. Ինդրան դառնում է անգղ (հնդկական առասպելներում՝ բազե), Ազնին՝ աղավնի, որը հալածվում է անգղից ու պաշտպանություն խնդրում Ուշինարայից: Երբ վերջինս պաշտպանում է աղավնուն, անգղը հիշեցնում է նրան պարտքի գիտակցման մասին. «Դու պարտաճանաչ մարդու հռչակ ունես, սակայն ինչո՞ւ պարտքի օրենքին հակառակ ես գնում» (III, 218): Ուշինարան առարկում է՝ բերելով առավել հիմնավոր պատճառաբանություն. «Ավելի մեծ ոճիր է վտանգված թույլին զրկել օգնությունից, քան թե կատարել ոճիրների ոճիրը՝ սպանել Բրահմինին<sup>15</sup>» (III, 219): Ուշինարան փերթ-փերթ կտրում է իր մարմինը, իսկ վերջում խոնարհաբար կանգնում կշեռքի նժարին՝ զոհաբերվելով արդար մեկին փրկելու նպատակով:

Դարձյալ նույն բանաձևումը. զոհվեց՝ արդար մեկին փրկելու բարձր առաքելությամբ: Ըստ Իսահակյանի՝ միայն այս դեպքում սովորական մահկանացուն կարող է վերափոխվելով հասնել հերոսի և մեծատառով Մարդու այն կերպարին, որն ուրվագծել է գրողն իր «Հիշատակարանում» և ստեղծագործություններում:

Դժվար չէ նկատել, որ հին հնդկական փիլիսոփայական-բարոյական ըմբռնումները խթանել են Իսահակյանին գրելու խոհափիլիսոփայական այնպիսի երկեր, որոնց շառավիղները ձգվում են մինչև հին հնդկական բանահյուսության մեծարժեք հուշարձաններից մեկը՝ «Վիկրամայի կյանքը» կամ «Արքայական գահի երեսուներկու պատմությունները» գիրքը, որում ասվում է. «Նա, ով լցված է կարեկցանքով և վտանգից պաշտպանում է բոլոր կենդանի արարածներին, չի մեռնի, եթե նույնիսկ կյանքը լքի նրա մարմինը»<sup>16</sup>:

Չետաքրքիր է իմանալ, որ բարոյախրատական դիտանկյունից հնդկական գրական երկերը բաժանվել են երեք խմբի՝ կյանքի երեք նպատակներին համապատասխան՝ արտակատհա՝ շահ ուսուցանող, կամակատհա՝ սեր ուսուցանող, և դիարմահատհա՝ բարոյական ու կրոնական պարտք ուսուցանող<sup>17</sup>: Չետևելով այս դասակարգմանը՝ Իսահակյանի կողմից մշակված արևելյան գրույցներն ու առասպելները կարելի է դասել դիարմահատհայի տարատեսակին, քանի որ քարոզում են առաքինություն, բարոյականություն, այլ խոսքով՝ պարտքի էթիկա:

Անդրադառնալով քրիստոնեության և բուդդայականության զուգահեռներին՝ անգլիացի կրոնագետ և ազգագրագետ Ջ. Ջ. Ֆրեզերը տեսնում է հետևյալ ընդհանրությունները. «Երկուսն էլ քարոզում էին առաքինություն՝ որպես այն բանին

<sup>13</sup> Мифология и литература Востока, Москва, 1995, стр. 28-29.

<sup>14</sup> Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1923, N 31, էջ 967:

<sup>15</sup> Բրահմանը բարձրագույն քրմական խավի՝ վարնայի անդամ է, որն օգտվել է առավելագույն իրավունքներից ու արտոնություններից: Բրահմանին սպանելը կամ անպատվելը համարվել է կրոնական ծանր մեղք:

<sup>16</sup> Վիկրամայի կյանքը, Երևան, 2001, էջ 113:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 16:

հասնելու միջոց, որը նրանք պատկերացնում էին իբրև կյանքի բարձրագույն նպատակ՝ հոգու փրկություն, թեև մեկը փրկությունը որոնում էր հավիտենական երանության, իսկ մյուսը՝ տառապանքներից վերջնականապես ազատագրվելու և բարձրագույն էակին ծուլվելու մեջ: Բայց նրանց քարոզած իդեալները և անձնական սրբության հասնելու աննկուն կողմնորոշումը հակասում էին ոչ միայն մարդկային էության թուլությանը, այլև մարդկանց բնածին բնազդներին»<sup>18</sup>: Ֆրեզերի կարծիքով՝ այդ դավանանքները կարիք ունեին վերակառուցման՝ ամբոխի նախապաշարմունքներին ու կրքերին համապատասխան. «Այդ վերափոխումները կենսագործելը,- գրում է նա,- բաժին ընկավ հետևորդներին, որոնք զգաստամիտ մարդիկ լինելով՝ ավելի էին համապատասխանում մարգարեների և ամբոխի միջնորդների դերին»<sup>19</sup>: Այդօրինակ հետևորդներից մեկն էլ Յիլլելն է, որին Իսահակյանն անդրադարձավ 1922 թ.՝ Վենետիկում գրելով «Ռաբբի Յիլլելը» լեզենդը: Լեզենդի համար որպես հիմք է ծառայել «Յիլլել» հոդվածը<sup>20</sup>:

Ըստ ավանդության՝ Յիլլելը ծնվել է 110 թ. Ք. ծ. առաջ: Դարձյալ ըստ ավանդության՝ Յիլլելին վերագրվում է այն, ինչ վերագրվել է Մովսես մարգարեին: Վեջինիս նման Յիլլելի կյանքն էլ բաղկացած է եղել երեք շրջանից. քառասուն տարի ապրել է հայրենիքում՝ Բաբելոնում, քառասուն տարի՝ Երուսաղեմում և քառասուն տարի՝ Իսրայելում: Իսահակյանի լեզենդն ունի ենթավերնագիր՝ Քրիստոսից 50 տարի առաջ, և պատումն սկսվում է արդեն Բաբելոնից Երուսաղեմ եկած Յիլլելի կյանքի նկարագրությամբ:

Վերոհիշյալ հոդվածում առավել մանրամասն է ներկայացված Յիլլելի գործունեությունը, ավելի շատ ավանդություններ կան նրա մասին, սակայն այդ բոլորից Իսահակյանն ընտրել է միայն երեքը: Նրա լեզենդը բաղկացած է երեք պատումներից, որոնցից երրորդում խտացվում է Թորայի ամբողջ ուսմունքն ընդամենը մեկ նախադասության մեջ. «Մի՛ անիր մերձավորիդ այն, ինչ որ դու չես ուզում՝ նույնը քեզ անեն»(III, 211). մի գաղափար, որն ամրագրված է Սուրբ գրքում հետևյալ տողերով. «Սիրի՛ր ընկերոջդ, ինչպես քո անձը», և «Այն բոլորը, ինչ որ դուք կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, արեք և դուք նրանց»:

Ուրեմն և անկարելի է, որ Իսահակյանը վրիպեր ու չանդրադառնար մարդկային բարձրագույն առաքինություններն իր մեջ բովանդակող Սուրբ գրքին: Եվ ահա, «հաստատ մարդ» կոչման հարցում բախտորոշ է համարում քրիստոնեության դերը՝ առաջին հերթին կարևորելով այլասիրությունն ու ներողամտությունը: Քրիստոսի հետ հարություն առնելը Իսահակյանի համար նույնն է, ինչ սիրելն ու ներելը: Բանաստեղծը Քրիստոսին համարում է իր վշտի ընկերը. «Այժմ իմ սիրելին Քրիստոսն է, - գրում է նա, - սիրել մարդկանց, ներել նրանց և միշտ լավը կամենալ» (Յ, 167):

Այսպիսով՝ ներկայացված-չներկայացված կերպարներից շատերը մարգարեներ են, առաքինություններ մարմնավորողներ, որոնք իրենց կյանքի նպատակն են դարձրել զեղեցիկի ու ճշմարտության որոնումը, որոնք կարող են իրենց կամ-

<sup>18</sup> *Ջեյմս Ջորջ Ֆրեզեր*, Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն, Երևան, 1989, էջ 425:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 426:

<sup>20</sup> Տե՛ս «Արարատ», 1912, N 7-8, էջ 588-594:



քին հնազանդեցնել կրքերի խաղն ու կույր բնազդները, որոնք բարձրագույն արժեքների, գաղափարների հետևորդ-ժառանգողներ են: Ճիշտ է, Իսահակյանն իր ստեղծագործություններում հաճախ հերոսին անվանում է այս կամ այն մարգարեի անունով, բայց պարզ է, որ գրողը ոչ թե մարգարեներից ու երկնքից է փրկություն ակնկալում, այլ մատնացույց է անում հոգևոր ինքնամաքման այն ուղին, որով անցել են նրանք, և որով կարող է անցնել բարձր բարոյականությամբ, հզոր մտքով ու երկաթե կամքով օժտված յուրաքանչյուր ոք: Իսահակյանի համոզմամբ՝ մարդը կարող է հաղթահարել այդ ճանապարհի խոչընդոտները, եթե անգամ «այդ ուղին նման է դանակի սուր շեղբին, ծանր է ու անանց...»<sup>21</sup>: Գրողն այդպիսի մարդուն անվանել է հերոս և ցանկացել մարդուն տեսնել հերոսի պատվանդանին բարձրացած և Մարդ կոչմանն արժանի: Նա հավատացել է մարդու ներուժին, կամքին, հավատացել է, որ նա դեռ պետք է անցնի որակական զարգացման հետևյալ փուլերը՝ հաստատ մարդ, հետո՝ մարդ-աստված, հետո՝ միայն աստված...(Հ., 77):

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ավետիք Իսահակյան*, Հիշատակարան (կազմող՝ Արամ Ինժիկյան), Երևան, 1977:
2. *Ավետիք Իսահակյան*, Երկերի ժողովածու 6 հատորով, Երևան, 1973-79:
3. *Արամ Ինժիկյան*, Ավետիք Իսահակյան, Երևան, 1977:
4. *Ավիկ Իսահակյան*, Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն, Երևան, 2000:
5. *Մանուկ Աբեղյան*, Երկեր, Է, Երևան, 1975:
6. *Սեյրան Չաքարյան*, Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2005:
7. Վիկրամայի կյանքը, Երևան, 2001:
8. *Ջեյմս Ջորջ Ֆրեզեր*, Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն, Երևան, 1989:
9. Հին Արևելքի պոեզիա, Երևան, 1982:
10. Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ավ. Իսահակյանի արխիվ:
11. «Արարատ», 1912, N 7-8:
12. «Հայաստանի կոչնակ», 1923, N 31:
13. *Л. С. Васильев*, История религии Востока, Москва, 1988.
14. *Э. Н. Темкин, В. Г. Эрман*, Мифы древней Индии, Москва, 1982.
15. Мифология и литературы Востока, Москва, 1995.

#### К ВОПРОСУ О ВОСПРИЯТИИ ИСААКЯНОМ ВОСТОЧНОЙ ФИЛОСОФИИ ЖИЗНИ

*Շ. Ջ. Ասգրյան*

В статье анализируется интерес А. Исаакяна к Востоку, в частности, к индийской философии и религии. Сделана попытка раскрыть весь спектр исаакяновского восприятия религиозной философии Востока. В этом контексте многие из легенд, написанные Исаакяном в этот период, в данной статье рассматриваются как высокохудожественный и своеобразный синтез различных религиозных и философских учений Востока (и не только). Особенно подчеркиваются не просто национальный, а общечеловеческий характер этих произведений.

<sup>21</sup> Հին Արևելքի պոեզիա, Երևան, 1982, էջ 309:

## ISAHAKYAN'S PERCEPTION OF ORIENTAL LIFE-PHILOSOPHY

*Ts. Zh. Asatryan*

The article highlights Isahakyan's interest towards Oriental and particularly Indian Philosophy. It attempts to reveal his perception of Oriental Philosophy. Many of Isahakyan's legends are perceived as unique and high-quality collation of Oriental religious movements. They are created with a stress on national and universal ideals.

### **«ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍԻ ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՇԱՐՔԻՑ. ՉՍՇԿԻԿ ՍՈՒԼԹԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Ա. Ա. ՂԱՐԻՔՅԱՆ**

*ԳՊՀ ընդհանուր գրականության ամբիոնի դասախոս*

Ի տարբերություն «Սասնա ծռեր» էպոսի մնացած բոլոր կին հերոսուհիների՝ առաջին հայացքից բավական նեղ, միագիծ է թվում Չմշկիկ Սուլթանի կերպարը, որը վեպում հանդես է գալիս միայն երրորդ ճյուղի վերջում: Վիպական հյուսվածքում Չմշկիկ Սուլթանը դրսևորում է վրեժխնդիր կնոջ հատկանիշներ: Սակայն «Սասնա ծռեր» էպոսի պատումների մանրամասն քննությունը մեզ բերում է այն եզրակացության, որ այս հերոսուհին ուղղակի կամ անուղղակի մոտիվներով իր մեջ պահպանում է սիրո և գեղեցկության աստվածություններին բնորոշ հատկանիշներ:

Սիրո և գեղեցկության աստվածություններին բնորոշ այդ հատկանիշներից ամենաընդհանուրը և կարևորը, որը կա և գործում է ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ առասպելաբանության մեջ, դա այդ դիցուհիներին բնորոշ գայթակղություն-մերժում-պատիժ /մահ/-հարություն առասպելական բանաձևին հատուկ մոտիվների շղթան է, ինչի քննությունն էլ կփորձենք կատարել ստորև:

Պետք է նկատել, որ, ընդհանրապես, սիրո և ռազմի դիցուհիները այս բանաձևով «գործում են» այն դեպքերում, երբ առնչվում են մեռնող-հառնող կամ ժայռում փակվող, ժայռին գանված հերոսներին:

Էպոսում Չմշկիկ Սուլթանի կերպարի շուրջ հյուսված միջադեպերը կայուն են. հերոսուհու գայթակղությունը, ապօրինի ժառանգի ծնունդը, հերոսի երդմնազանցությունը, վերադարձը և վրեժխնդիր կնոջ կողմից հերոսին պատժելը՝ մահը:

Ամենամակերեսային քննությունն անգամ ցույց է տալիս, որ Չմշկիկ Սուլթանի գործառույթը սերտորեն կապվում է Դավթի մահվան միջադեպի հետ:

Մեր էպոսում հերոսի մահը (որը հայր և որդի հակամարտության արդյունք է, ինչը նաև սերնդափոխության պայմանն է), ի տարբերություն այլ ժողովուրդների էպոսների, լուծվում է ոչ թե օրինական ժառանգի միջոցով (Մհերը չի սպանում Դավթին, թեկուզ նրանք մենամարտում են), այլ ապօրինի ժառանգի միջոցով, ինչը նկատել է Աբեղյանը<sup>1</sup>: Ապօրինի աղջիկն է սպանում հորը թիկունքից, և ինքն

<sup>1</sup> *Ս. Աբեղյան*, հ 1, Երևան, 1966, էջ 424: